ԵՐԵԽԱՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏ, ԹԵ՞ ՍՈՒԲՅԵԿՏ

ՏԱԹԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վերջին տարիներին տարբեր գիտակարգերի շրջանակներում հաճախակի է քննության առարկա դառնում սոցիալական կապիտալի հայեցակարգը: Այն ուսումնասիրվում է առավելապես հասարակական կյանքի վրա ունեցած դրական ազդեցությունների համատեքստում՝ համարվելով նույնքան կարևոր, որքան տնտեսական կապիտալը[1]:

Սոցիալական կապիտալի ձևավորման հիմքում ընկած առանձին երևույթներ՝ սոցիալական փոխազդեցություն, փոխադարձ վստահություն, փոխանակում և այլն, սկսել են քննարկվել սոցիոլոգիական մտքի զարգացման ավելի վաղ փուլերում և տեղ են գտել, օրինակ, Կ. Մարքսի ատոմացված և կոլեկտիվ հասարակարգերի, Է. Դյուրկհեյմի օրգանական և մեխանիկական համերաշխության վերաբերյալ հայացքներում:

Հետագայում բուն «սոցիալական կապիտալ» հասկացությունը գիտական շրջանառության մեջ դրվել է ամերիկացի սոցիոլոգ և տնտեսագետ Ջ. Քոուլմանի կողմից: Վերջինս այն դիտարկում է մարդկային կապիտալի ձեռքբերման համատեքստում և բնորոշում որպես տարրերի ամբողջություն, որոնք ունեն երկու ընդհանրություն: Նախ բաղկացած են սոցիալական մի քանի կառուցվածքից, երկրորդ՝ դրանցում ընդգրկված դերակատարների համար որոշակի գործողություններ կատարելը հեշտացված է[2]: Այնուամենայնիվ, սոցիալական կապիտալի ուսումնասիրությունների ակտիվ փուլի հիմքը դրվեց Պ. Բուրդիեի կողմից[3]: Համաձայն նրա՝ սոցիալական կապիտալն առկա կամ հնարավոր (պոտենցիալ) ռեսուրսների ամբողջություն է, այլ խոսքով՝ ծանոթության և փոխվստահող հարաբերությունների սոցիալական ամուր ցանց ունենալու արդյունք: Ի դեպ, սոցիալական ցանցը, որպես այդպիսին, գոյություն չունի, այն պետք է ձևավորվի, կառուցվի և պահպանվի, ընդ որում, նշված ցանցի կառուցումը և պահպանումը, ինչպես կապիտալի այլ ձևերի պարագայում

[1] Տե՛ս **A. Portes**, Social Capital: Its Origins and Applications in Modern Sociology / Annual Review of Sociology (24), 1998, Kindle Edition, էջ 39-43:

[2] Տե՛ս **Дж. Коулман**, Капитал социальный и человеческий / Общественные науки и современность, 2001, № 3, Перевод Л. Стрельникова, А. Стасенко, 2001, էջ 124:

[3] «Կապիտալի ձևերը» հոդվածի անգլալեզու հրատարակությունից հետո, 1986 թ.:

(օրինակ՝ տնտեսական), ենթադրում են որոշակի ներդրումային ռազմավարությունների կիրառում[4]:

Ի տարբերություն նախորդների՝ մեկ այլ տեսաբան՝ Փաթնեմը, սոցիալական կապիտալը դիտարկում է որպես անհատներից դուրս գտնվող համայնքային կամ խմբային ռեսուրս, որը նպաստում է ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Այսինքն՝ սոցիալական կապիտալը համընդհանուր բարիք է, որի «խտությունը» պայմանավորված է տվյալ համայնքում վստահության և փոխադարձ օգնության մակարդակով[5]:

Նշված և այլ հեղինակներ (հատկապես մինչև 1990-ական թվականները) փորձել են հասկանալ կամ չափել սոցիալական կապիտալի ազդեցությունը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների վրա՝ կրթություն, առողջապահություն, զբաղվածություն, սոցիալական ապահովություն[6] և այլն: Նրանք սոցիալական փոխազդեցությունների հիմնական գործող անձ են համարում չափահաս անհատին, իսկ երեխային, որպես փոխազդեցության սուբյեկտի, գրեթե չեն անդրադարձել, ինչը տվյալ ժամանակահատվածում մանկության սոցիոլոգիայում ձևավորված պատկերացումների հետևանք է:

Երեխայի և մանկության վերաբերյալ սոցիոլոգիական պատկերացումները հենվում են երեխայի սոցիալականացումը մեկնաբանող երկու մոտեցումների վրա՝ դետերմինիստական և կոնստրուկտիվիստական: Ըստ առաջինի՝ երեխան հասարակության առանձին տարր է, որը այդ հասարակության լիարժեք անդամ դառնալու համար ձևավորվում և ուղղորդվում է զուտ արտաքին ուժերի ազդեցությամբ[7]: Մասնավորապես, նման մոտեցում է դրսևորում Դեյվիսը, համաձայն որի՝ հասարակության համար ամենակարևոր գործառույթները մարդն իրականացնում է հասուն շրջանում և ոչ թե մանկության տարիներին, իսկ երեխաներն ապրում են մեծահասակների աշխարհում և ենթարկվում նրանց կանոններին[8]:

Այս պարագայում երեխային սոցիալական կապիտալի ձևավորման սուբյեկտ դիտարկելու մասին խոսք անգամ լինել չի կարող: Մանկությունը կենսագործունեության կրավորական (պասիվ) շրջան համարելու հետ մեկտեղ՝ նշված մոտեցումներում անտեսվում է նաև

---

[4] Տե՛ս **P. Bourdieu**, The Forms of Capital, Handbook of Theory and Research for the Sociology of Education, 1986, ed. Richardson, J., Westport, CT: Greenwood, էջ 248:

[5] Տե՛ս **Nicole J. Schaefer-McDaniel,** Conceptualizing Social Capital among Young People: Towards a New Theory, Children, Youth and Environments, vol. 14, № 1, 2004, էջ 157:

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս **William A. Corsaro**, The Sociology of Childhood, 2nd edition, 2005, Sage Publications, Pine Forge Press, էջ 7:

[8] Տե՛ս **Kingsley Davis**, The Child and the Social Structure / The Journal of Educational Sociology, Vol. 14, № 4, 1940, էջ 217:

երեխայի՝ իր զարգացմանը զուգընթաց՝ ընտանեկան և միջավայրային այլ գործոնների ազդեցությամբ անհատական սոցիալական կոմպետենտություն ձեռք բերելու, ինքնուրույնության աճի, ծնողների կողմից իրեն փոխանցված հարաբերությունները վերաիմաստավորելու գործոնները: Սոցիալական փոխհարաբերություններում նշված գործոններն ապահովում են երեխայի անցումը օբյեկտի կարգավիճակից սուբյեկտի: Ահա ինչու, սոցիալական կապիտալի մասին վերը նշված մոտեցումները, մեր կարծիքով, կիրառելի են երեխաներին վերաբերող ուսումնասիրություններում, սակայն ոչ սոցիալական կապիտալի ձևավորման մեկնաբանություններում: Սոցիալական կապիտալի ձևավորումը հիմնականում դիտարկվում է անհատական մակարդակում: Եթե ընդունում ենք, որ երեխան անհատ է, ապա նման մոտեցումը հնարավոր է կիրառել նաև երեխաների առօրյա կյանքում իրականացվող գործողությունները բացատրելու նպատակով: Օրինակ, ըստ Բուրդիեի, սոցիալական կապիտալի ձևավորմանն ուղղված գործողությունները ենթադրում են գիտակցված մասնակցություն խմբի կյանքում՝ «հնարավոր շահի» ակնկալիքով: Չափահասների դեպքում «հնարավոր շահ» ասելով հիմնականում նկատի է առնվում *սոցիալական կապիտալը սեփական տնտեսական կապիտալի ընդլայնման նպատակին ծառայեցնելը:* Նույն մոտեցումը, ըստ էության, կիրառելի է նաև երեխաների դեպքում: Դրա վառ օրինակ կարող է լինել երեխաների միջև փոխազդեցությունների որոշ ձևերի քննարկումը, որոնք իրականացվում են առանց մեծահասակների իմացության: Դրանց թվում են երեխաների մտերիմ շրջանակի՝ ընկերների միջև խաղալիքների, ուսումնական նյութերի, տեղեկատվության և այլնի փոխանակումը՝ հաշվի առնելով տեղեկատվության փոխանցման ժամանակակից միջոցների հնարավորությունները: Սակայն նշված մոտեցումն ունի նաև որոշ վերապահումներ: Օրինակ՝ կապիտալի ձեռքբերման կարողությունը (շեշտադրվում է Բուրդիեի մոտեցումներում), ենթադրաբար երեխաների պարագայում ամբողջությամբ չի կարող իրացվել: Նախ, նրանք իրավունքի սուբյեկտ չեն և ենթարկվում են դրանով պայմանավորված որոշակի իրավական ու սոցիալական սահմանափակումների (օրինակ՝ ընտրելու իրավունք չունենալը), բացի այդ՝ նրանք գտնվում են խնամողների մշտական վերահսկողության ներքո: Ի լրումն՝ երեխաների շփման շրջանակը, որպես կանոն, սահմանափակվում է ծնողների կողմից «ցանկալի» համարվող անձանցով՝ անտեսելով ինքնուրույն շփումների հնարավորությունը, ինչը սոցիալական կապիտալի ձևավորման կարևորագույն նախապայմաններից մեկն է[9]: Երեխայի սոցիալականացման դետերմինիստական ընկալմամբ ստացվում է, որ նրա սոցիալական կապիտալն անմիջական ազդեցություն է կրում և ուղղորդվում այն մեծահասակ-

[9] Տե՛ս **Nicole J. Schaefer-McDaniel**, նշվ. աշխ., էջ 159:

ների կողմից, որոնք պատասխանատու են նրա դաստիարակության համար։ Վերապահում անելով, որ երեխայի կամ դեռահասի սոցիալական կապիտալը նաև ընտանիքից դուրս՝ այլ միջավայրում է գտնվում, Քոուլմանն, այնուամենայնիվ, այն պայմանավորում է այդ միջավայրում ծնողների[10] ունեցած հարաբերությունների կառուցվածքով[11]։ Փաստորեն այս մոտեցման շրջանակներում երեխան դիտվում է սոցիալական կապիտալի ձևավորման օբյեկտ, մինչդեռ այն միջավայրերը (և դրանց բազմազանությունը), որոնցում ընդգրկված են երեխաները՝ դպրոցից մինչև սպորտային կամ մշակութային խմբակներ, ոչ միշտ են ծնողների ամբողջական վերահսկողության ներքո։

Ինչ վերաբերում է երեխաների շրջանում սոցիալական կապիտալի ուսումնասիրությանը, ապա այն դիտվում է կա՛մ որպես ծնողներից երեխաներին փոխանցված սոցիալական ժառանգություն, կա՛մ քննարկվում Քոուլմանի ընտանեկան սոցիալական կապիտալի շրջանակներում, որն ընտանիքում երեխայի և ծնողների կամ ընտանիքի այլ անդամների սոցիալական փոխազդեցությունների ամբողջություն է[12]։ Այսինքն՝ նշված մոտեցումներում երեխան դիտվում է միայն որպես հասարակական հարաբերություններում գործընթացների ազդեցության օբյեկտ՝ անտեսելով երեխայի «հետադարձ» ազդեցության, առավել ևս հասարակական հարաբերություններում սուբյեկտ դառնալու հնարավորությունը։ Սրա վերաբերյալ քննադատական մոտեցումների հանդիպում ենք սկսած 1990-ականների կեսերից։ Կրելով մանկության սոցիոլոգիայում երեխայի և մանկության՝ որպես սոցիալական երևույթների (ֆենոմենի) վերաբերյալ դրույթներում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը՝ դրանցում քննադատվում է երեխային՝ որպես սոցիալական կապիտալի ձևավորման օբյեկտ դիտելու մոտեցումը։

Կոնստրուկտիվիստական մոտեցման պարագայում երեխան դիտվում է որպես իր սոցիալական աշխարհում սեփական դերի կառուցման (ձևավորման) գործուն մասնակից[13]։ Այսինքն՝ երեխաները համարվում են սոցիալական փոխազդեցության ինքնուրույն միավորներ՝ սուբյեկտներ, որոնք ունեն մեծահասակների աշխարհից տարբերվող իրենց աշխարհը, կենսագործունեության սեփական նորմերն ու արժեքները։ Այստեղ կարևոր է դառնում Կորսարոյի առաջարկած «մեկնաբանող վերարտադրության» հայեցակարգը[14]։ Վերջինս հա-

---

[10] Քոուլմանը բացառում է երեխաների կողմից հարաբերությունների հաստատումը այն մարդկանց հետ, որոնք չեն ընդունվում իրենց ծնողների կամ ընտանիքի կողմից կամ գտնվում են նրանց ծանոթների շրջանակից դուրս։

[11] Տե՛ս **J. Coleman**, Social Capital in the creation of Human Capital / American Journal of Sociology, vol. 94, 1988, էջ 113։

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 110։

[13] Տե՛ս **William A. Corsaro**, նշվ. աշխ., էջ 7։

[14] Տե՛ս **William A. Corsaro**, Interpretive Reproduction in Children's Peer Culture / Social Psychology Quarterly 55: 1992, էջ 160–77։

կադրվում է սոցիալականացման դասական հայեցակարգին և պնդում, որ երեխայի զարգացումն ու հասունացումը ոչ միայն հարմարման և սոցիալական նորմերի յուրացման, այլև դրանց վերաիմաստավորման և վերարտադրության գործընթաց են: Երեխաները բանակցում են, կարծիքներ փոխանակում և ստեղծում սոցիալական ուրույն մշակույթ մեծահասակների ու միմյանց վրա փոխազդելու միջոցով: Հետևաբար, եթե երեխային դիտարկենք միայն սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացի օբյեկտ, ապա ուղղակիորեն բացառած կլինենք այնպիսի իրավիճակի հնարավորությունը, երբ երեխան ինքնուրույն է գործում, իր դաստիարակությամբ զբաղվող մեծահասակներից անկախ[15]:

Քննադատական մոտեցման հեղինակները փորձում են պատասխանել այն հարցին՝ *արդյո՞ք երեխաները կարող են սոցիալական կապիտալի ձևավորման աղբյուր լինել:* Ըստ էության, հարցը քննարկվում է երկու կողմից, առաջինը, թե ինչպես կարող են երեխաները նպաստել իրենց խնամակալների սոցիալական կապիտալի ընդլայնմանը և, երկրորդ՝ երեխայի գործունեության որ ձևերն են ուղղակիորեն ապահովում իր կապիտալի ձևավորումը:

Առաջին մոտեցումը քննարկվում է Լ. Վուդի կողմից: Նա նշում է, որ երեխաները ծնողների համար սոցիալական կապիտալի կատալիզատորներ են: Այսինքն՝ նրանց շնորհիվ ծնողները մասնակից են դառնում միևնույն միջոցառումներին դպրոցում, խաղահրապարակներում, համայնքում ու շփվում են երեխա ունեցող այլ անձանց հետ, և այս ամենը նպաստում է ծնողների սոցիալական կապիտալի ընդլայնմանը[16]:

«Կատալիզատորի» գործառույթը, մեր կողմից քննարկվող՝ երեխայի օբյեկտ, թե սուբյեկտ լինելու հարցի համատեքստում մի տեսակ միջանկյալ դիրքում է գտնվում: Թեև քննարկվում է սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացում երեխայի գործոնը, այնուամենայնիվ այդ գործընթացում նրա դերը չի քննարկվում: Գործելով «հանուն երեխայի»՝ ծնողները շահում են երեխայի առիթով ձևավորվող ընդլայնված սոցիալական շփումից: Այսպիսով, երեխային համարելով սեփական սոցիալական կապիտալի ընդլայնման աղբյուր՝ ուշադրությունից դուրս է մնում այն հանգամանքը, թե արդյոք ծնողները որևէ ազդեցություն կրում են իրենց երեխաների գործողություններից, այլ խոսքով՝ այդ փոխազդեցությունների շրջանակում (բացի երեխայի գոյության փաստից) երեխան գործընթացի ակտի՞վ, թե՞ պասիվ մասնակից է:

---

[15] Տե՛ս **Madeleine Leonard**, Children, Childhood and Social Capital: Exploring the Links, Sociology, Vol. 39(4):605-622, SAGE Publications, 2005, էջ 607:

[16] Տե՛ս **Lisa Wood, Billie Glies-Corti, Stephen R. Zubrick,** and **Max K. Bulsara**, Through the Kids… We Connected with Our Community: Children as Catalysts of Social Capital, «Environment and Behavior», Vol. 45(3), Sage Publications, 2011, էջ 349:

Երկրորդ մոտեցմամբ, որը մշակվել է Լեոնարդի կողմից, համարվում է, որ, ի թիվս այն փաստերի, որոնք ապացուցում են, որ ընտանիքում չափահասների սոցիալական կապիտալն ազդում է երեխաների սոցիալական, մշակութային, մարդկային կապիտալի ձևավորման վրա, երեխաներն էլ իրենց հերթին ի զորու են ձևավորելու սոցիալական ցանցեր՝ ծնողների սոցիալական ցանցերից անկախ: Դրա վառ օրինակը երեխայի աշխատանքային գործունեությունն է, այդ թվում աշխատանք փնտրելու ռազմավարությունները[17]: Հեղինակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատանք փնտրելու ընթացքում նրանք օգտագործում են ոչ միայն իրենց ծնողների, այլև իրենց իսկ ձեռք բերած կապերը կամ դրանց շղթայական արդյունքները: Այսինքն՝ նրանք հարաբերություններ են ստեղծում անձանց հետ, որոնք ուղղակիորեն կապված չեն իրենց ընտանիքի որևէ չափահաս անդամի հետ: Ըստ էության, առանձնացվում է հասակակիցների՝ որպես տեղեկատվությունը փոխանցելու վստահելի աղբյուրի դերը: Արդյունքում հասակակիցների խմբում սկսում է ձևավորվել փոխադարձ վստահության և պարտավորության միջավայր, ինչը սոցիալական կապիտալի ձևավորման կարևորագույն նախապայմաններից է[18]:

Պետք է նշել, որ չնայած նման փաստարկներին, որոնք վկայում են երեխաների՝ սեփական սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացում դերակատարության (սուբյեկտի) մասին, որոշ հարցեր դեռևս բաց են մնում կամ դրանց մակերեսային անդրադարձ է կատարվում: Հարցերից առաջինը վերաբերում է այն բանին, թե ի վերջո երեխաների կողմից ինչպես է պահպանվում ձեռք բերված կապիտալը, արդյոք նրանք կիրառում են այդ ուղղությամբ Բուրդիեի նշած ներդրումային ռազմավարությունները, և եթե այո՛, ապա որոնք են դրանց բնորոշ առանձնահատկությունները: Երկրորդ հարցը, որին կարծես վերջնական պատասխան չի տրվում, հետևյալն է՝ արդյո՞ք երեխաները կարող են ապահովել կապիտալի տարբեր ձևերի փոխանակելիությունը, ինչի մասին խոսում էր Բուրդիեն՝ այն համարելով կապիտալի կայունության պայման:

Միևնույն ժամանակ երեխայի՝ սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացի օբյեկտ, թե սուբյեկտ լինելու՝ մեր առաջ քաշած հարցադրմանը կարող ենք տալ որոշ պատասխաններ:

- *Երեխաները դեր ունեն սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացում:* Երեխաները սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացի մասնակից են, ընդ որում, ինչպես իրենց, այնպես էլ խնամակալների կապիտալի, քանի որ ոչ միայն կրում են, այլև թելադրում

[17] Տե՛ս **Leonard M.,** Children, Childhood and Social Capital: Exploring the Links, Sociology, Sage Publications, 2005, էջ 619-620:

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 617:

սոցիալական փոխազդեցությունների որոշակի որակ ու շրջանակ։

- Երեխաները ոչ միայն ունակ են *ստեղծելու սեփական սոցիալական կապերը*, այլև տարիքին և սոցիալական կոմպետենտության աճին զուգընթաց, ավելի հաճախակի են ձևավորում սեփական սոցիալական կապերը՝ հաշվի առնելով տեղեկատվության փոխանակման այնպիսի միջոցների հասանելիությունը, ինչին ոչ բոլոր մեծերն են տիրապետում կամ ոչ նույնքան վարպետորեն։

- *Ծնողների սոցիալական կապիտալը երեխայի սեփական սոցիալական կապիտալի հիմքն է*, կապերի այն ամբողջությունը, որոնց որակը, ծավալն ու խտությունը ուղղորդող նշանակություն են ունենում, սակայն ոչ միշտ են նշանակալի։

Հետևաբար, երեխաները սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացում միաժամանակ թե՛ օբյեկտ են, թե՛ սուբյեկտ։ Սակայն կա լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք՝ արդիականացնելու՝ սոցիալական կապիտալի ձևավորման համատեքստում երեխայի օբյեկտ-սուբյեկտ առնչությունների հարափոփոխ դաշտը, մասնավորապես հարկավոր է՝

1) **հստակեցնել** ծնողների, ընտանիքի՝ երեխայի՝ սոցիալական կապեր հաստատելու վրա ունեցած ազդեցության սահմանները,

2) **առանձնացնել** այն գործոնները, որոնք ապահովում են երեխայի՝ սոցիալական կապեր ձևավորելու ինքնուրույնությունը,

3) **բացահայտել** երեխայի՝ սեփական սոցիալական կապիտալի ազդեցության սահմաններն ընտանիքի անդամների վրա։

Նման մոտեցումը թույլ կտա խուսափել օբյեկտ-սուբյեկտ առնչությունների ծայրահեղական և միակողմանի մոտեցումներից և երեխաների սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացն ու դրա առանձին տարրերը վերլուծել համակողմանիորեն։

Բանալի բառեր – *սոցիալական կապիտալ, մանկություն, սոցիալական փոխազդեցություններ, մանկության սոցիոլոգիա, օբյեկտ, սուբյեկտ, սոցիալականացում*

ТАТЕВИК КАРАПЕТЯН – *Дети объект или субъект в процессе формирования социального капитала?* – В исследованиях социального капитала дети традиционно рассматриваются как объекты и пассивные субъекты его формирования. Рассматривать ребёнка как самостоятельный субъект – относительно новый подход. Он основан на восприятии ребёнка субъектом прав. При этом он выступает участником социального взаимодействия, которое инициирует и развивает собственную социальную сеть. В статье проведён сравнительный анализ двух упомянутых подходов.

Ключевые слова: *социальный капитал, детство, социальное взаимодействие, социология детства, объект, субъект, социализация*

TATEVIK KARAPETYAN – *Children Object or Subject of Social Capital Formation Process?* – Existing studies of social capital traditionally view children as objects and passive actors of the capital formation process. Acknowledging the child as an independent entity (subject) is a relatively new approach based on viewing them as subjects of rights. Here the child is an active participant of the social interaction process, who initiates in and develops their own social network. This article attempts to conduct a comparative analysis of the two approaches mentioned above.

Key words – *social capital, childhood, social interactions, sociology of childhood, object, subject, socialization*